46ա ... *Օղուլբեկկէնց Կիրակոսն — Ա. (1) լաւ խալիչ, Բ. (2) նալբաքի*[56], *Ա. (1) քաշած եաղլուխ, Ա. (1) ապրիշումէ մեծ բան եաղլուխ, Ա. (1) մաղաս, Ա. (1) մեծ կարպետ, մէկ Մաշտոց՝ ԺԵ. (15) մախալ արծաթէ խաչ վերէն։*

... *Թամրազն — Բ. (2) շարիէ եառւր։*

.... *Իւր որդիքն Ազիզբէկն և Գիրակոսն — Բերին մէկ լաւ փառաւոր խաչ տեղի պատմուտանով*[57], *մէկ ջուխտ շամատան ջոխտակ մումատեղով, մէկ արծաթէ գանթեղ։*

46բ ... *Սարգսի որդի Էվազն — եառւր մէկ լաւ շուրջառ, մէկ Աւետարան, մէկ զանկակ։*

47ա ... *Օղուլբէկն, իւր կինն — մէկ ջոխտ տարմաչ բազբան։*

48ա ... *Գալուստն և իւր եղբայր Մարտիրոսն — Ա. (1) զառ շուրջառ եառ, Ա. (1) փոքրիկ խաչ Սբ. Յակոբին, Բ. (2) զանգակ, Ա. (1) շապիկ։*

49ա ... *Տէր Վարդանի տղայ Յովաննէս վարդապետն — մէկ խալիչայ։*

50ա ... *Ջլբացէնց Վարդան։*

50բ ... *Եաղուպի որդի մահդասի Թեղանն և որդիքն — մէկ ջոխտ լավ արծաթէ քշոց, մէկ լավ սկու եաղլախ՝ զառ, մէկ էլ զառ կոոփուռայ*[58]*։ Եւ իւր դուստր Գաբարն — եառւր մէկ զառքաշ փոքր ծածկոց։*

51ա ... *Խարմէնց։*

52ա ... *Ջլբացէնց Խաչատուրն — Ա. (1) ֆռանկի գիրք, մէկ Թօփ*[59] *շարիթ։*

53ա ... *Ջլբացէնց Դաւիթ։*

54ա ... *Փութէնց։*

55ա ... *Քաչալին տղայ Աւետիքն։*

56ա ... *Ճլհակ Սիմոնի Թոռն։*

57ա ... *Պուղտիկի տղա Յովանէսն — Ա. (1) ջահ եառւն Սբ. Յակոբին։*

58ա ... *Սահակէնց Մէլիքսէթն և Պօղոսն — Ա. (1) ջահ, Ա. (1) պղընձէ բուրվառ, Ա. (1) սպիտակ չարկուլ*[60] *եաղլախ եառւ[ն], Գ. (3) պղնձի կանթեղ։*

59ա ... *Ջլբացէնց Մարկոսն։*

60ա ... *Անիեաթէնց Յակոբն և իւր կին Անախաթունն — եառւր մէկ խալիչայ, մէկ շապիկ, եկեղեցուն էլ շորեղեն այ տվէլ։*

61ա ... *Քամբաղէնց տղայքն — Ա. (1) շուրջառ եառւն Սբ. Յակոբին։ Եւ Կոստանդի կին Հուռումն — մէկ Աւետարան, մէկ փէշկիր եաղ[լ]ուխ, գերեզմանումն Շատիբէկէնց կալի կէսն իւրան էր, եառւր գերեզմանի վախուպ։*

62ա ... *Մուհրիեարէնց։*

63ա ... *Ահլիմանէնց մահդասի Մարգարայ և իւր որդի Սիմոնն — Ա (1) մեծ սկիհ եառւն Սբ. Յակոբին, Ա. (1) խալիչայ։*

---

56 *պրսկ.* نلبکی *— փոքրիկ ափսե։*

57 *Հավանաբար՝ պատվանդան։*

58 *լատ.* corporalis *— պատարագի ժամանակ օգտագործվող ճերմակ կտավ։*

59 *Թրք.* طوپ *— կծիկ, գունդ, փաթեթ։*

60 *պրսկ.* چار گل *— քառանկյունի, հավանաբար նաև չորս անկյունները ծաղկազարդ թաշկինակ։*